ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ՝ ՎՐԱՍՏԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անուն, ազգանունը,

Արտակ Ղազարյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Վրաստան, Բաթումի, 2017թ. մայիսի 10-12

4. Հրավիրող կողմը.

- Կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների միջազգային ասոցիացիա
- Վրաստանի սոցիալական ծառայությունների գործակալություն

5. Գործուղման նպատակը.

- Մասնակցություն Կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների միջազգային ասոցիացիայի «Վրաստանի և Եվրասիական երկրների կենսաթոշակային ապահովության և սոցիալական ապահովագրության ոլորտների զարգացման հեռանկարները» խորագրով միջազգային համաժողովին,
- Մասնակցություն Կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների միջազգային ասոցիացիայի անդամների ընդհանուր ժողովին,
- Երկկողմ հանդիպումներ անդամ երկրների համապատասխան մարմինների ղեկավարների հետ:

6.Համաժողովի օրակարգը, զեկույցները, քննարկումները, հանդիպումները, բարձրացված հարցերը

Օրակարգ, զեկույցներ և քննարկումներ

- Բացման խոսքով հանդես եկան Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության փոխնախարար, Վրաստանի սոցիալական սպասարկման գործակալության ղեկավար Զազա Սոպրամաձեն, Ռուսաստանի Դաշնության Կենսաթոշակային հիմնադրամի նախագահի առաջին տեղակալ Ալեքսանդր Կուրտինը և Սոցիալական ապահովության միջազգային ասոցիացիայի (ԺՆև) գանձապահ Նիկոլայ Կոզլովը, ովքեր մասնակիցներին շնորհավորեցին նաև ասոցիացիայի հիմնադրման 25-ամյակի կապակցությամբ:
- Վրաստանի Տնտեսական զարգացման նախարարության կապիտալի շուկայի զարգացման և կենսաթոշակային բարեփոխումների վարչության պետ Գիորգի Չիչինաձեն ներկայացրեց Վրաստանում ներդրվող նոր կուտակային կենսաթոշակային համակարգը, որը մշակվել է Ասիական զարգացման բանկի աջակցությամբ: Համակարգի մշակման հարցում հաշվի է առնվել նաև Հայաստանի փորձը, որի կապակցությամբ 2016թ. կազմակերպվել է ուսումնական այց Հայաստան ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ:
- Ներկայումս Վրաստանի պետական կենսաթոշակային համակարգի քաղաքականության իրականացման համար պատասխանատու է Սոցիալական ծառայությունների գործակալությունը, որը գործում է Վրաստանի աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարության ենթակայության ներքո: Գործակալությունն ունի 72 գրասենյակներ ամբողջ երկրով մեկ, որտեղ աշխատում են մոտ 2400 աշխատակիցներ: Գործակալությունը հանդիսանում է հանրային իրավունքի ամենամեծ

իրավաբանական անձը, որը տիրապետում է երկրի պետական բյուջեի 30%-ին՝ սոցիալական ծրագրերի իրականացման համար: Դրանք են՝ առողջապահական, երեխայի խմանքի, զբաղվածության ապահովման, պետական կենսաթոշակների վճարման, փոխհատուցման և այլ գումարային նպաստների ծրագրեր: Գործակալությունն իրականացնում է տարեկան ավելի քան 45 տարբեր ծրագրեր, յուրաքանչյուր ամիս մոտ 60 տեսակի գումարային վճարումներ և 38 տեսակի ոչ գումարային նպաստներ: Գումարային վճարումներն իրականացնում է «Լիբերթի բանկ» ԲԸ, որն ունի մասնաճյուղերի լայն ցանց (289), 101 շարժական սպասարկող կենտրոններ և բանկոմատներ ողջ երկրի տարածքում: Գյուղական համայնքներում բնակչության սպասարկման համար գործակալությունը Վրաստանի Արդարադատության նախարարության հետ համատեղ ստեղծել է «Հանրային կենտրոններ»:

Վրաստանի կենսաթոշակային ներկա համակարգը չի նախատեսում միաժամանակ երկու կամ ավելի սոցիալական փաթեթներից օգտվելու հնարավորություն, ինչպես նաև սոցիալական փաթեթ և պետական կենսաթոշակ կամ պետական փոխհատուցում:

- Ռուսաստանի Դաշնության Կենսաթոշակային հիմնադրամի նախագահի առաջին տեղակալ՝ Ալեքսանդր Կուրտինը Ռուսաստանի Դաշնության օրինակով ներկայացրեց ժամանակակից աշխատանքի ազգային շուկաների և կենսաթոշակային համակարգերի փոփոխությունները: Նշվեց, որ աշխատանքի շուկայում կան բացասական միտումներ՝ առկա վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության ցածր մակարդակը, ինքնազբաղվածների թվի ավելացումն ի հաշիվ վարձու աշխատողների, ինչպես նաև երիտասարդության աշխատանքային գործունեությամբ զբաղվելու տարիքի ավելացումը: Կենսաթոշակային համակարգի մասին խոսելիս նկատեց, որ կենսաթոշակի անցնելու տարիքը վերջին 60 տարում մնացել է անփոփոխ: Կենսաթոշակային համակարգի կայունացմանն ուղղված քայլերից պրն. Կուրտինը մատնանշեց

կենսաթոշակի չափի հաշվարկման բանաձևի փոփոխությունը, անընդմեջ աշխատանքային ստաժի պահանջի ավելացումը, աշխատող կենսաթոշակառուների սահմանափակման ներդրումը, ինչպես նաև կենսաթոշակի հավելումները մինչ նվազագույն սպառողական զամբյուղը:

Ելույթի վերջում զեկուցողը կարևորեց միջպետական պայմանագրերի բազայի զարգացումը՝ համարելով այն Եվրասիական տնտեսական միության շրջանակներում իրականացվող ինտեգրացիայի կարևոր մաս:

- Ելույթներով հանդես եկան նաև Ղազախստանի, Ադրբեջանի, Մոլդովայի, Ղրղզստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի համապատասխան մարմինների ղեկավարները:
- Համաժողովին ելույթ ունեցավ նաև Սլովակիայի Հանրապետության տարածքային զարգացման գործակալության տնօրեն Լ. Պավլովան:
- Առաջին անգամ Կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների միջազգային ասոցիացիայի կողմից կազմակերպված միջոցառումներին մասնակցում էին նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնյաներ: Իր ելույթում հանձնաժողովի աշխատանքային միգրացիայի և սոցիալական պաշտպանության դեպարտամենտի տնօրենի տեղակալ Օ. Արտամանովն անդրադարձավ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների կենսաթոշակային համակարգերին, դրանց առանձնահատկություններին՝ այդ թվում ոլորտի ներպետական օրենսդրությունների որոշակի տարբերություններին, առկա խնդիրներին և հնարավոր լուծումներին: Նա կարևորեց նաև կենսաթոշակային ոլորտում համաձայնագրի ստորագրման անհրաժեշտությունը:
- Ուշագրավ էր Համառուսական աշխատանքի գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր գիտական աշխատակից Վլադիմիր Ռոիկի ելույթը, որում ակնարկ արվեց կենսաթոշակի պատմությանը, ինչպես նաև ներկայացվեցին համակարգի նախկինում եղած (ժառանգություն ստացած) և դեռ չլուծված,

ինչպես նաև առաջիկա մարտահրավերները: Սոցիալական ապահովագրության ինստիտուցիոնալ անբավարարվածությունն արտահայտվում է ոչ միայն սոցիալական պաշտպանության ոլորտում, այլ նաև աշխատողների մոտիվացիայի պակասով՝ վաստակելու կենսաթոշակային իրավունքներ: Ելույթում Ռոիկը խոսեց նաև փոխհատուցման գործակցի հաշվարկման մոդելի մասին և առաջարկեց այն հաշվարկել ոչ թե միջին աշխատավարձով, այլ վերջին աշխատավարձով:

Սոցիալական համակարգերի խնդիրների առումով առաջարկվեց պետության միջամտությամբ ֆունդամենտալ հիմնախնդիրների լուծմամբ կազմավորել կենսաթոշակային ապահովագրության արդյունավետ մեխանիզմներ:

- Ռուսաստանում առկա բազմաթիվ մարտահրավերների մասին խոսեց նաև Ռուսաստանի Դաշնության աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարության կենսաթոշակային ապահովության դեպարտամենտի վարչության պետի տեղակալ՝ Սվետլանա Կոմարովան:
- Մասնակիցների մոտ մեծ հետաքրքրություն առաջացրեց Հայաստանի զեկույցը: Սոցիալական ապահովության պետական ծառայության ղեկավար Արտակ Ղազարյանն անդրադարձավ ոչ միայն կենսաթոշակային համակարգի պետական և կուտակային բաղադրիչներին, այլ նաև կոնկրետ օրինակներով ներկայացրեց այն նորամուծություններն ու ծրագրերը, որոնք ներդրվել են պետական կենսաթոշակային համակարգում և էապես բարելավել ծառայությունների որակը: Ներկայացվեց տեղեկանքների տրամադրման նոր համակարգը, որի ներդրման արդյունքում մի շարք տեղեկանքներ քաղաքացիներին են տրամադրվում 15 րոպեների ընթացքում նախկին մեկ շաբաթվա փոխարեն: «Էլ. Կենսաթոշակ» համակարգի պարբերաբար կատարելագործման արդյունքում 2017թ.-ից քաղաքացիները կարող են դիմումներ ներկայացնել Ծառայություն ոչ թե ըստ գրանցման հասցեի, այլ ցանկացած մոտակա բաժին: Ներկայացվեց նաև վերջերս ներդրված «Ազգային

արխիվ» համակարգը, որի միջոցով այսուհետ Ծառայության աշխատակիցները, քաղաքացիների փոխարեն, առցանց կդիմեն և կստանան անհրաժեշտ արխիվային փաստաթղթերը Ազգային արխիվից:

Ունկդիրների մոտ մեծ հետաքրքրություն առաջացրեց երեխայի ծննդյան միանվագ նպաստի առցանց համակարգը, որի միջոցով ծնողները կարող են համացանցի միջոցով դիմել և ստանալ նպաստի գումարը իրենց հարմար բանկի միջոցով առանց ծառայության տարածքային բաժին ֆիզիկապես այցելելու:

Զեկուցողը ներկայացրեց նաև Ծառայությունում 2017թ.-ին ներդրված կառավարման նոր մոդելի էությունը: Ծառայությունում, ըստ ծրագրերի, կազմավորվում են աշխատանքային խմբեր և նշանակվում է ծրագրի ղեկավար, ընդ որում պարտադիր չէ, որ ծրագիրը ղեկավարի հիերարխիայով ավելի բարձր պաշտոնատար անձը: Արդեն իսկ գործարկված ծրագրերի արդյունավետությունը բարձրացել է հենց այս մոդելի ներդրմամբ:

- Քննարկումների արդյունքում Մոլդովայի, Ղրղզստանի և Ղազախստանի պատվիրակությունները ցանկություն հայտնեցին 2017թ. ընթացքում այցելել Հայաստան՝ սոցիալական ապահովության պետական ծառայության փորձին տեղում ծանոթանալու և իրենց երկրներում որոշակի լուծումներ տեղայնացնելու հնարավորությունները քննարկելու նպատակով:
- Որոշվեց 2019թ. սկզբին Հայաստանում կազմակերպել միջազգային համաժողով Կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների միջազգային ասոցիացիայի աջակցությամբ:

7. Հանդիպումներ և բարձրացված հարցեր

- Արտակ Ղազարյանը համաժողովի շրջանակներում մասնակցեց Կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների միջազգային ասոցիացիայի անդամների համապատասխան մարմինների ղեկավարների ընդհանուր ժողովի աշխատանքներին, որի օրակարգում ընդրգկված էին

    - Կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների միջազգային ասոցիացիայի նախագահի ընտրությունները,
    - Ասոցիացիայի տնօրենի ընտրությունը,
    - Ֆինանսական կանոնակարգի հաստատումը:
- Կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների միջազգային ասոցիացիայի անդամների ընդհանուր ժողովի կողմից Կենսաթոշակային և սոցիալական հիմնադրամների միջազգային ասոցիացիայի նախագահ ընտրվեց Ղազախստանի «Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ» բաժնետիրական ընկերության նախագահ Սաուլե Դյուսենովան: Մինչ այդ, ավելի քան 18 տարի ասոցիացիան նախագահում էր Ռուսաստանի կենսաթոշակային հիմնադրամի նախագահի տեղակալ Ալեքսանդր Կուրտինը:
- Ասոցիացիայի տնօրեն ընտրվեց Եվգենի Ամետովը:
- Մասնակիցների ընդհանուր ժողովը քննարկեց և հաստատեց նաև ֆինանսական կանոնակարգը: Որոշում կայացվեց, որ 2017թ. սեպտեմբերին Ղազախստանի Աստանա քաղաքում կայանալիք համաժողովին պետք է մշակվի և քննարկման ներկայացվի ասոցիացիայի անդամավճարների վճարման նոր կարգ: Առաջարկվեց նաև Աստանայի համաժողովին ապահովել ֆինանսական հանձնաժողովի անդամների մասնակցությունը: Հայաստանից ֆինանսական հանձնաժողովի անդամ է սոցիալական ապահովության պետական ծառայության պետի տեղակալ Վահագն Գրիգորյանը:
- Արտակ Ղազարյանը երկկողմ հանդիպումներ և քննարկումներ ունեցավ նաև առանձին երկրների ներկայացուցիչների հետ: Ռուսաստանի Դաշնության Կենսաթոշակային հիմնադրամի նախագահի առաջին տեղակալ Ալեքսանդր Կուրտինի հետ, մասնավորապես, քննարկվեցին Հայաստանի սոցիալական ապահովության պետական ծառայության և Ռուսաստանի կենսաթոշակային հիմնադրամի միջև համագործակցության և ծառայությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված կոնկրետ մեխանիզմներ:

- Մոլդովայի Հանրապետության սոցիալական ապահովագրության ազգային դրամարկղի նախագահ՝ Լաուրա Գրեկուի հետ քննարկվեցին սոցիալական ապահովության պետական ծառայությունում ներդրված տեղեկատվական և կառավարման համակարգերն այդ երկրում տեղայնացնելու հնարավորությունները և համապատասխան բիզնես մեխանիզմները: Որոշվեց առաջիկայում կազմակերպել մոլդովական պատվիրակության այց Հայաստան տեղում խնդիրները քննարկելու և լուծումներ տալու նպատակով: Այցը նախատեսվում է 2017թ. օգոստոս կամ սեպտեմբեր ամիսներին:
- ԵԱՏՄ շրջանակներում կենսաթոշակային ապահովության հարցերով համագործակցության հարցեր քննարկվեցին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ձեռնարկատիրական գործունեության զարգացման դեպարտամենտի տնօրենի տեղակալ Սամատ Ալիևի հետ: Շոշափվեցին նաև կենսաթոշակային համաձայնագրի հետ կապված խնդիրներ:

ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

16.05.2017